ք. Երևան

22.06.2020թ.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 432487/19

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 22.06.2020թ.-ի թիվ 23771 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Սևակ Խեչոյանը (ՀՎՀՀ՝ 43061588, հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան, 4Մ/Շ, 44, 14) համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել 2019թ անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի սոցիալական վճարի հաշվարկը, համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի մարտ ամսվա եկամտային հարկի հաշվարկը և համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 261 հոդվածի 1-ին մասի՝ սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել 2020 թվականի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը, որոնց համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, ակտի հասցեատերը չի ներկայացել: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Այն փաստը, որ Սևակ Խեչոյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է առաջին անգամ, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 հոդվածի 2-րդ մասի՝ Սևակ Խեչոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 10.000 (տաս հազար) դրամի չափով:

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40): Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել: Գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված